ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«30» «հունվարի» 2020 թ. № 31-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տվյալ բյուջետային տարվա պետական բյուջեով շրջակա միջավայրի նախարարության համար նախատեսված պարգևատրման ֆոնդից աշխատողների պարգևատրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման համար պատասխանատվությունը դնել շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի վրա:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1/30/2020

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092

«30» հոկտեմբեր 2020թ.
ք. Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2020 թվականի հունվարի «30» N 31 -Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տվյալ բյուջետային տարվա պետական բյուջեով շրջակա միջավայրի նախարարության համար նախատեսված պարգևատրման ֆոնդից աշխատողների պարգևատրման կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) քաղաքական, հայեցողական և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց (այսուհետ՝ Աշխատող) հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրման պայմանները, ընթացակարգը և չափերի որոշման կարգը:

2. Նախարարության աշխատողների դրամական պարգևատրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տվյալ բյուջետային տարվա պետական բյուջեով շրջակա միջավայրի նախարարության համար նախատեսված պարգևատրման ֆոնդի հաշվին՝ ամսական պարբերականությամբ:

3. Սույն կարգով նախատեսված պարգևատրումները տրվում են սույն կարգին կից Ձև N1-ով սահմանված պարգևատրման ենթակա Աշխատողների ցուցակի /այսուհետ՝ Ցուցակ/ հիման վրա:

4. Նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, գործակալությունների Ցուցակները կազմում են տվյալ ստորաբաժանումների, գործակալությունների ղեկավարները:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված ստորաբաժանումների, գործակալությունների ղեկավարների Ցուցակները կազմում են համապատասխան ոլորտը համակարգող պաշտոնատար անձինք:

6. Նախարարության քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց Ցուցակները կազմում են նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք:

7. Նախարարության գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարի տեղակալների, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց Ցուցակները կազմում է նրանց անմիջական ղեկավարը:

8. Ցուցակների կազմման համար հիմք են հանդիսանում տվյալ ժամանակաշրջանում կատարված աշխատանքի և (կամ) հատուկ առաջադրանքների կատարման բովանդակությունը, կատարման ժամկետները, ծավալը, որակը՝ կիրառելով պաշտոնային դրույքաչափի նկատմամբ պարգևատրման գործակից:

9. Աշխատողը դրամական պարգևատրում չի ստանում, եթե պարգևատրման համար սահմանված ժամանակահատվածում նրա նկատմամբ կիրառվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժի տեսակ, ինչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանված կամ մարված չէ, կամ դրամական պարգևատրում տալու

վերաբերյալ հրամանն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ աշխատողն ազատվել է աշխատանքից:

10. Աշխատողը կարող է ստանալ դրամական պարգևատրում, եթե դրամական պարգևատրում տալու վերաբերյալ հրամանն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գտնվում է ամենամյա արձակուրդում, ժամանակավոր անաշխատունակության մեջ կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նպատակային արձակուրդի կամ գործուղման մեջ:

11. Դրամական պարգևատրման սահմանված ժամանակահատվածում Աշխատողի նկատմամբ միևնույն հիմքով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսանքի այլ տեսակ կիրառված լինելու հանգամանքը արգելք չէ նրան նույն ժամանակահատվածում դրամական պարգևատրում տալու համար:

12. Նախարարության քաղաքական, հայեցողական և քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի պաշտոններ զբաղեցնող անձանց պարգևատրումները տրվում են շրջակա միջավայրի նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական իրավական ակտի հիման վրա:

13. Նախարարության 12-րդ կետում չներառված քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, քաղաքացիական աշխատանք կատարողների և տեխնիկական սպասարկում իրականացնողների պարգևատրումները տրվում են պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անհատական իրավական ակտի հիման վրա:

II. ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Աշխատողների պարգևատրումն իրականացնելու նպատակով՝

14.1 Նախարարության Ֆինանսատնտեսական վարչությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում նախորդ ամսվա համար հաշվարկված պարգևատրման գումարի ընդհանուր չափը:

14.2 Սույն կարգի 4-8-րդ կետերի համաձայն յուրաքանչյուր ամսվա համար կազմված և ստորագրված Ցուցակները Նախարարության գլխավոր քարտուղարին են ներկայացվում մինչև հաջորդ ամսվա 7-ը:

14.3 Նախարարության գլխավոր քարտուղարը, հաշվի առնելով աշխատողների կողմից տվյալ ժամանակաշրջանում իրականացրած գործառույթները, կատարված աշխատանքի բովանդակությունը կամ հատուկ առաջադրանքների կատարման բնույթը, 1-օրյա ժամկետում Նախարարի համաձայնեցմանն է ներկայացնում պարգևատրման ենթակա Աշխատողների ամփոփ Ցուցակը, ներառյալ իր կողմից համակարգվող ստորաբաժանումների պարգևատրման ենթակա ղեկավարների Ցուցակը:

14.4 Նախարարության Գլխավոր քարտուղարը Նախարարի հետ համաձայնեցված ցուցակները և սույն կարգի 14.1 կետի համաձայն ստացված տվյալ ամսվա համար հաշվարկված պարգևատրման գումարի ընդհանուր չափը տրամադրում է Նախարարության բնապահպանական ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչությանը, որը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է դրանք, նախապատրաստում է դրամական պարգևատրում տրամադրելու մասին հրամանների նախագծերը:

14.5 Հրամանների ստորագրումից հետո Նախարարության ֆինասատնտեսական վարչության կողմից իրականացվում է պարգևատրման գումարների վճարումը:

ՑՈՒՑԱԿ

«—»«————» 20 թ.- «—»«————» 20 թ.
ընկած ժամանակահատվածի համար
պարգևատրման ենթակա աշխատողների

Աշխատողի		Պարգևատրման համար հիմք հանդիսացող կատարված աշխատանքի հակիրճ նկարագրությունը	Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվող պարգևատրման գործակիցը
անուն, ազգանունը	պաշտոնը		

_____ _____

(պաշտոնատար անձի, անուն ազգանունը, պաշտոնը) ստորագրությունը

«——» «————» 20 թ.